



## ՀԻՆ ՀԱՒԱՏՔ

— \* \* \* —

ԳԼ. 6. — ԿԵՆԴԱՆԵԱՅՑ ՊԱՇՏՈՆ

(Տես յէլ 337)



եւս ջրային և ցամաց  
քային կենդանեաց՝  
եթէ օգյ մէջ շրջող-  
ներուն հետ այլ ուս-  
զենք թափառիլ, շատ  
մանր քննութեանց  
կարօսիլը, և ոչ շատ  
հաստատ։ Հայոց համ-  
ազգային և արքունիք  
զօրագոննից և պաշտօ-  
նէից մէջ կային այ-  
եւայլ հաւեղինաց  
պատկերօց զրօշակիբը, ինչպէս Աղաւենի, Բագետ,  
Արծուի, և այլն. և ամբողջ ազգաստնմք Հաւու-  
նից կամ Հաւունմիք բայց թէ ասկ նշան մ' էին  
այգոնք թէ կրօնական գտափառը, չեմք կըր-  
նար վճաել, միայն հաւունուկան է Արծու-  
նեաց զԱրժիա պատուելն, եթէ արզարեւ  
ըստ պատմամթեան՝ Ասորեստանեաց սերունդը  
կամ խառնուրդը են, իսնէ իրենց նահապեա-

ներն, որոյ Ա. Գիրք այլ երաշխատոր են,  
Սենեքերիմ թագաւորը սպաննաղ որդուց ի Հայո-  
վախաւտը յիշելով. ասոնց ազգին շասուած-  
ներէն մէկն էր Ներաք կամ Նեսրոք<sup>1</sup>,  
որոյ զիմաց՝ իր 185,000 զօրբով բանակը  
կորսընցընող թագաւորն երկրպագելու ասեն՝  
կեակն այլ կորոյս. հայրապանըն՝ իրենց  
կողոպատած ընչից հետ՝ թէ ոչ նոյն՝ այլ ուրիշ  
արծիւ-ղից պատկեր այլ բերին ի Հայո, ուր  
և պաշտուեցաւ իրենց ժառանգած կողմերում։  
Այս է հաւանօրէն Ասօրեստաց ցեսին ա-  
նուան պատճառը, զոր իրենց պատմիչն թուլ-  
ման հետաքններէ ի Ժ գարու, յետ խորենա-  
ցու։ — Ուրիշ կողմանէ՝ անյարմար չէ որ  
երբ չըրբուանեաց թագաւոր անուանեալ Ա-  
ռիւծն ի պատուի էր ի ցամացի, որոց մէջ  
այլ թուղողաց թագաւոր Արծիւն՝ պատուած

1. Արտաքերէն այլ Նեսր կոչուի Արծիւն կամ  
Անգղն։

ըլլայ, մանաւանդ եթէ ինչպէս Յունաց Զեւսի՝ այսպէս այլ Հայոց Արամազզայ նոտրած և այնոր ձեռաց վրայ հանգած էր հայկական ոչ անշան Արծիւն. որոյ այլեւայլ տեսակը յիշուին մեր լեզուաւ, Գետարծուի, Յըրտարծուի, Քաջարծուի. — Քան զայն մեծ իր այլեւայլ տեսակօք (որպէս Պաշկուճ, Լաշհաւ, Քարբազ <sup>1</sup>), Անգդն այլ իր պատիւն և կրօնական յիշատակն ունեցած երեւե՛ Անգեղտան մեծ ցեղին և նախարարին անունէն գուշակելով: Այս ծանօթ և երեւելի կենզաւնիներէն ետեւ՝ կ'արժէ՞ արգեօց փոքրիկ միշտ մ'այլ յիշել, որ մեծամեծ անուններ ունի, Ասկի Եզնակ, Աստուծոյ Եզնակ, և առասպելական նշան մ'ընծայէ. ի բժշկական բառ Գայիինոսի, Ճիշի բունաւոր կոչուի. Միսիթար Գոչի կ. առակն յայտնէ թունաւոր Ըլլալը:

Հայոց երկրի Թունարանութիւնն՝ թէ իրօք և թէ անուամբը կրրնայ հարուստ ըսուիլ, և կրօնական ու պատմական նշանական հետապնելիք՝ Արտաշազահաւն, Ապսեկին, Բարիեռուծն, Բրդոսն, Գորգուրորն, Խշաբրմուզն, Լժիշէն, Լատիհակոյն, Լովկորուսիկն, Լովացուշն, Ցովճանենահաւն, Սաներարորոկն, և այլն. զորս՝ մեր այս զործոյ նպատական ճանշալու համար՝ մեզի այլ զօրաւոր թեւեր պէտք էին:

## Գ Լ Ո Ւ Խ Զ .

### Հ Յ Ի Ե Շ Ք

Վ Ա Շ Ա Պ . Վ Ա Ր Ա Գ . Վ Ի Շ Ա Պ Ա Ք Ա Դ .

Ե Պ Ճ Ե Ր Ո Ւ Ա Ք Ա Պ Ղ . Ա Բ Է Հ Զ . Հ Ա Մ Բ Ա Ր Ո Ւ .

Հրէշ կոչուին մեր լեզուաւ յատկապէս կենդանական արարածք, որք կամ իրենց ծանօթ բնականէն զորս կերպարանք մի ունին՝ մե-

1. Արաբերէն անուն է Անգեղ, բայց այսպէս գրուի յԱղթարս մեր. և ի գարնան երեւնալու օրն այլ նշանակուի, 'ի 18 մարտի. « Այսոր Քարբազն ի Հռոմանց երկիրն զայ»: Տեղ մ'այլ՝ իրեւ պատկերի կամ երազի մէջ տեսնելով, « Երկու մարդ ի Քարբազն են հեծեր, և զթեւն ի մէկմէկի մէկն են ձգեր ս.

ծութեամբ կամ փոքրութեամբ, կամ անզամաց այլաձեւութեամբ, և կամ տարրեր տեսակ կենդանեաց խառնուրդ են. և կամ եւս կէս բանական կենդանակերպ: Եթէ՝ ո'ր և է պատճառառ կենդանեաց պաշտօն ծագած է, մարդկան երեւակայութիւնն պատճառներն աճեցուցած է աննց վրայ. և զի երեւակայութեան չափ և կանոն չկայ, դիւրին էր և է Հրէշից ստեղծումն ի մլուս, մանաւանդ ուր բնութեան սովորական չափէն և ձեւէն զորս կենդանի մի տեսնուի, կամ սուար երկրի և անծանօթ բան մի լուսի: Շատ հեթանոսաց մէջ կար ուրիշ պատճառ մ'այլ կենդանեաց և հրէշից պաշտաման. — Հոգէփոխութեան հաւաաքն. իրբութէ հոգիք մարդկան յետ մանու։ ոչ միայն ուրիշ մարդուն հոգի կ'ըլլան, այլ և կենդանեաց, կամ որ նայն է՝ փոխուին ի կենդանիս: Այս ազանդն չի յիշուիր մեր ազգի մէջ, այլ պէս պէս Հրէշից հաւաաքը՝ քրիստոնէւթենէ վերջ այլ երեւած են, և զեռ նշանարուին: Ոչ միայն երեւակայեալ ձեւաւոր Հրէշը համարուած են, այլ կան եւս՝ որոց երեւակայութիւնն չէ կրցած որոշ կերպարանք մի տալ, և մտօց կ'ըլրունուին իրեւեւ ոզիք և զօրութիւնց անտեսանելի ազդիչը: — Ամենայն սուարի հաւաաք մէկ զինաւոր պատճառն՝ տեսանց ի սկզբան վախսը, որ շատ աւելի ազգած է Հրէշից հաւաաք մասին. այսինքն, Հրէշը՝ ընդհանրապէս անարկու և վասակար բաններ են. միայն մարդկաներայից մէջ բարերարը և բարերարոյը այլ կարծուած են, որոր յիշենք յետ պարզ անրան հրէշից:

Ինչպէս պաշտեցեալ կենդանեաց մէջ նախ Օձն յիշուեցաւ, Հրէշից մէջ այլ Օձն և Վիշապն առաջնութիւն մի ցուցընեն. միթէ զըրափափ՞ Օձին, սատանայի և Եւայի հեռաւոր յիշասակօց, որք շատ ազգաց սկզբնական աւանդութեանց մէջ զուսին գուցէ այս թեթեւ կարծեաց թեթեւ կըիս մ'այլ տայ Վիշապն. որ սովորաբար կատաղի և անձունի (զազան) նշանակէ, բայց երբեմն գոյականապէս այլ զազանակերպ էակ մի կարծել տայ. եթէ զուտ հայերէն անուն ըլլար՝ կըրնայինք քննել, թէ Վիշ-ապի պէս Վիր-ագ բարգութիւն մի շըլլայ, Վիրը համարելով վին,

զան զի սա Վիրճ այլ զրուի : Բայց հին օտար լեզուաց մէջ այլ կայ պատփախ անոնք և մերձաւոր իմաստ, առ Հնդկի՝ Ուրաք նրաշանակէ մեծ անճոռնի օձ, ինչպէս մեր լեզուաց այլ . առ Լատին՝ Ուրագ, Uragus կոչուէր իրենց գոմաց շաստածն Պլուտոն, թերեւս՝ սրբաւոր այրել բարին իմաստի. գարձեալ Վիրագ՝ Virago կոչէին վիթխարի և այրամբար կինը. ընդ հակառակն Վիրցo (Վիրգո) գկոյս. ըստ Հնդկաց այլ Վիրաշամանշանակի թէ կայս և մէտ առաջին կյոյն (Եւա). դիւցազն և մեծ գորոթիւնն այլ Վիրա կոչեն արքա : — Մեր նախնի Հայոց և Հնդկաց լեզուք, ըստ այժմու լեզուագիտաց՝ քոյրք են, կրօնակին շատ իմաստներ այլ համաձայն. ուստի կ'ընդունիմք Վիրազն այլ նշանակի, Վիշապի :

Այս մեծ սողունը յիշեցինք ի կարգի բընական կենդանեաց պաշտուած. եւս առաւել պաշտօնի կամ խորշելի էր հրէշ վիշապն, որ ի միտս կամ առ ազս մնահաւաստ Հայոց՝ թուէր ըստ Եզնդիկայ՝ « Կեզծո ի կեզծո լինելու ո. այսինքն, երբեմն օձաձեւ կ'երեւէր, երբեմն մարդակերպ. երբեմն երկրի վըրայ, երբեմն այլ թեւաւորեալ վիշանայր յօսս, և թերեւս մրրկելով զայն պատճառէր նախայիշեալ վիշապ հանեկը (149). ցամաքի վրայ այլ մեծ վլաս կ'ընէր, արտորէից բերքը և հունձը յախտակելով, և իրեն պէս կարծիական զրաստուց շալիկելով աներեւոյթ կ'ընէր. վախկաս մշակը այլ զանոնք վախցրնելու համար՝ կաչ կաշ պտոյին. զոր ծաղրելով կ'ըսէ Եզնիկ. « Վիշապն որ ինքն զրասաւէ, այնու զի անսասուն և անխօսուն է, և զիստրք որ ինքն զրասաւ է՝ զայլ զրասա վարիցէ... ի զոր է կաւ կաւ ասել ումեց ի կալս, և ոչ ԱՌ առ առ » :

Բայց կ'երեւէր թէ վիշապքն երբեմն ուրիշ զրասաւ զանանելով՝ իրենք ի ջորի և ուզու փոխուէին : Այս այլանդակ կարծիք ոչ միայն Եղարու մէջ կար առ մերայինս, այլ և

Ժդ դարուն՝ Վահրամ վ. . գրէր առ Հերթում թագաւոր նմանապէս, միայն փոխանակ արտօրէից բերոց՝ Վիշապք կոմերու վրայ կաշելով կաթերնին ծծէին. նոյնակէս այլ լսեր էր, թէ « Յողով մարդիկ աեսեալ են զի վիշապ վերանայր յերկրէ յերկինս » : Թերեւս այս օգերեւոյթ ձկնամբն այլ նշանակէ (149). որոյ նման մուժ կերպով մի զրէ դարձեալ մեր Եզնիկն. « Ես, եթէ բառ » նայցի ի վեր՝ այնպիսի Վիշապն, ոչ եթէ « եգամբք ինչ անուանելովք, այլ ծածուկ զու բութեամբ ինիք յԱստուծոյ հրամանէ . զի և մի՛ շոգին՝ մարդոց կամ անսանոյ մեղան, և շիցէ » : Արդեօք նախայիշեալ զրաստներն են այ եղինք, եթէ այլ ինչ առասաբել :

Ուրիշ ազգաց մէջ այլ գոտին այսպիսի բերքերու և համբարաց զող հրէշը յիշասակը. ինչպէս, հին Գերմանացւոց Eptitebock երեւակայեալն, որ նշանակէ Հնձարազ, այսինքն հունձեր գողող Քաղ կամ Նոխազ, (և ոչ Քաղող հնձօց) : — Ալապէս այլ կըրնայ իմացուի և առ մեզ Վիշապաքար բազագրեալ հրէշն, որոյ պաշտօնն ի Հնդկաց մուսած էր ի Հայս, և ըստ Ազաթանգելի՛ մերոց եօթն զլիաւոր շաստուածոց պաշտօնէն ետեւ, « Ութերորդ պաշտօնն հոչակեալ առ նուանեալն Վիշապաքանը Վահրամի ի Թաշ » տից աեղիս թագաւորացն Հայոց Մեծաց, ի » սնարս լերին Քարքեայ », զոր Ծնլեց Ս. Լուսաւորիչն. թէ և հասարակօրէն այս անուան քաղը՝ բուն քաղել ժողովլ համարուի, այսինքն օձերը յնչել, կամ Վիշապը սպաննել, ինչպէս ըրած էր Յունաց Վահրամն Հերակլէս. յունարէն Ազաթանգելն այլ այս բառ գրած է Ճռակոնուունէօց, յորմէ լատինն Draconum suffocator, որ է՛ վիշապահեղզայ :

Եթէ այս աեղ Վահրամն էր վիշապաքազն, սակայն Քաղ կենդանի առասպելեալ երեւէ շատ աեղ, թուի թէ իր բուռն և երազ բրնաւորութեանն համար, և զուգուած ոչ միայն վիշապի հետ, այլ և ուրիշ կենդանեաց, որպէս, Եղջերուաշաղն և Վիշապահեծն Քաղ : Յեւախն թուի բաղադրեալ յերից. զուկն Քաղի, մարմինն և նիրանքն Աստուծու, առատն Վիշապի. և կամ ըստ Քիսեսի Յունաց՝

1. Գրիս այս բառը զրելու առենք միաբան գրեց, թէ արդեօք Վիշապի այլ հրէշ մի չէր նշանակեր, առասպելեալ և բազագրեալ ի վիր և խար կենդանեաց, որ են այժեամ և էշ :

պովին առիծու, մարմինն Քաղի, տուտն վիշապի. այս յոյն անուամբ զրէ Ս. Ռոկի-բերան (ի կողասացոց մեկն. տպ. Ա, 602) զոր մեր նախնիք թարգմանեն այսպէս. « Զիշացողան՝ ի քմաց ստեղծանեն և զիշեմասն, այսինքն՝ որ զվիշապառիւծ Քաղոն համբաւեն, և զայլոն նոյնպիս՝ Վիշապ» ո ոտուն. և զոր Սկիզբն անուանեն՝ որ ո թարգմանի Ապուաք, (այս տեղ կ'աելցընէ մեր թարգմանիչն). Որպէս և Հայր Ծովան ցուշու թին և Վիշապս մարդակերպս և ո Պայս և Ասեղոս հոսմաւեն» « Քանի մի տող յետոյ դարձեալ յիշուին Զիշացողքն, Ապուաքն և Վիշապափածքն Քաղքն որով հաստատուի թէ. Հայոց երեւակայեալն քիշ մի տարբեր էր ի Քիւեռէ, և աւելի տարբեր մէկայլքն, զորս պիտի յիշեմք յետոյ: Մեր Օրացոցից մէջ Դեկանմբեր ամսոյ կենազանակերպն՝ Կերպով մի ամեն տարի ներկայացընէ մեզ այս Վիշապաքաղը կամ Վիշապառիւծն Քաղը: — Վիշապներէն հեռանալու աստեն յիշենք մէկ երկու ժամանք և անձանօթ հրեշտական կենազանիներ այլ որ գրուած են Յովիմիոսի առասպելեալ պատմութեան մէջ, իրեւ ամայի տեղեր զանուող և Օձը և վիշապը և Պիծակը... հանզիպի » քեզ Զօրն Խեխմանրին, և Սյենկոյին և Հիդրայի և Շունքը երեքդյլիսեանք» :

1 Թէպէտ և հզօրապյն կ'երեւի Վիշապաքաղն ի կարծիս, բայց աւելի յանախ կամ հասարակաց ծանօթ թուի Եղիշեռաքարտին, որ համարուէր « Եկենանի՝ որ յեղծերուէ և ա ի Քաղէ է; կամ կէսն Եղիշեռուի և կէս » Քաղի», կամ Քօշի, ինչպէս զրէ Սահմանաց զրոց մեկնին, և կ'աւելցընէ « բայց ոչ է » և ի խօս առփորաբար այս բառա նշանակէ շեղած և շըլլալու անհեղեղ երեւակայական բան մի, որոյ աեղ արեւամեայք Քիմեա, քիմեռական կ'ըսեն, Chimère, Chimérière que, բայց նոյն մեր բառու այլ ունին իրենց լեզուով. թ. Տրաչէլաֆօս, Tragelaphus, միայն կենդանեաց անուանին հակաշար եւն Աս անուան Ս. Գրոց մէջ (թ. Օրէնք, ծդ, 5) զրեն անոնք, ուր մեր թարգմանութեան մէջ մէկ երկու աւելի առնեն կայ, և հաւանորէն այս Եղծերուաբաղի

մեղ՝ մերոց զրածն է Խարբուզ, որ ըստ պարսկի բանից թարգմանուի էշայժեաման: Զդիւածի մէջ ի՞նչ աւանդութեամբ մեր նոր բանասէր մի զեղծերուաբաղն՝ հայկական զիցուհեա հետեւող և սպասաւոր համարի, իրը նամիշտ է Հրէշացեալ վաղի կարծիքն այնքան արամասցեալ էր առ մերայինս, որ գուցէ զեռիւսած չէ ի մասաց. զոնէ անցեալ զարու վարդապիտա մի զրէր մեր մամերու համար, թէ Համբաւ հանեն, եթէ տանն՝ Դիշաց « Քոչ է վայր եկել. մեծամեծ զօնզայ? » (ուտելիք) զատ շինեն, տներումն գնեն, որ չ գերցն ուռենին տանատէրն երթեալ ասէ. « Բարեաւ եկայը, զինչ կամիք արարէք, մեզ » մի՝ ասք վնաս » :

Քաղէն վերջ Ցըլց խառնուրդ հրէշը յիշուին, ինչպէս Ռսկիմերանի թարգմանանութեան մէջ տեսածնիս, Զիշացու և Ծովացու. կայ և Խացու և Եղնախոյ. սակայն թարգմանութեանց մէջ գտնուելով այս անուանը՝ օտարածին երեւին, միայն Ծովացուը Հայոց մըսացածին կ'ընծայէ հայ թարգմանիչն. Եղնիկ այլ կ'ըսէ. « Ծովացուն՝ զոր ի կովկ եղեալ ասեն » , յարմարազոյն թուէր ի ծովի կարգալ և ոչ ի կովկ. բայց դարձեալ կ'ըսէ. « Մին ասէ, թէ ի մերում գեոյ Ծովացու և զեղով զործեաց, և զողչինն հանապազ մեր և ամենեցեան լսեմք » , առջի ըսածին համեմատ պէտք էր ըսել, թէ կով զիշացով գործեաց. Թէպէտ այնչափ սուս մին՝ որչափ միւսն. բայց եթէ Հայոց երկիրն լճերուն մէջ մեծամեծ ձկունք ըլլան:

Վերսյիշեալ թարգմանչին, Եղնկան, Խորենացոյ և այլոց շատից յիշած՝ Հայոց ամենէն աւելի նշանաւոր հրէշ կենդանին՝ է Առակ կամ Յարաշէ, Արաւիկ, քիշ շատա ասրբերութեամբ գրուած, բայց ըստ իրացանիւրին այլ համեմատ մեկնուած. Առէշն՝ իրը առող և լզու, Յարալէզն իրը յար (միշտ) լիզող. Արալէզն՝ լիզող զԱրոյ ։

---

1: Խորթ կ'երեւի ուրիշ մէկու մի կարծիքն այլ, թէ Ամաւիկ ըսելու էր, իրը լիզող արանց, քաջ պատերապչողաց, նոյնպէս և Զըրպէտի շփոթութիւնն, որ փռանկերէն բիք Thik

վասն զի նախ մեր Արայ զեղեցիկ նահաւ պետի աւանդութեան մէջ յլշափի, թէ երբ մեռուա նա ի պատերազմին ընդդէմ իր ըստրուած սիրողին Շամիրամայ, սա վախնալով Հայոց վրէժննարութենէն՝ համրաւեց, թէ իր շունդերան չաստուածքն լզերլի Արայի վըրքիրը՝ ողջնոցըին. և այսոր յիշատակ՝ « կանգնէ » և նոր իմն պատկեր դիւաց, և մեծապէս ո գոնիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, » իրը թէ այս գօրութիւն առառուածոց կեն, » զանացոցին զԱրայ » : — թեաց ի՞նչ եղաւ նա, ո՞վ աղճատեալ: — Սահմանաց դրոց լուծին՝ քիչ մ'այլ պարզելով՝ զրէ. » Սատարանեաց այսպէս ասելով, թէ առա առուածքն չնորհեցին մեզ կենդանիս ոմանս, » որոց լիզեալ զԱրա կենդանացոցին, լցուցա՝ նելով զփափագ մեր. անդուստ սկսեալ ասեն » դոլ կենդանի թարալէզ » : — Յարմարագոյն է այսպէս լզուզէն համարիլ զանուն հրէշին քան լզուզէն, թէ և ստոյդ կամ անոսոյդ Արայի անունն՝ իրեն քաշէ զփաթիս: Շամիրամայ չնորհուած կենդանիբ իրեն ոչ անա պատշաճ շունք են, որոց լզուզէթիւնն ամենուն յայսնի է. նախնիք այլ շունէ ձեւացած կ'ըսէին զԱռէզն, կամ շնակերպ, շնախտոն: Վանական վարդապետ Յարալէզ կոչէ և համարի մեր ուրիշ և նորագոյն առասպելաւանդ թագաւորի մի, Արսաւազզայ երկու Շուներն, « Եեւս և Սպիտակ, որ յար լեզուն զփափանս » նորա ու ինչ կերպարանք այլ ունէր՝ Առէզի գործն այս էր, որ « Յորժամ վիրաւոր » որ անկեալ ի պատերազմի զնիցի, լիզիցէ և » ողջացուցանիցէ »: — Եթէ ստոյդ է պատմածն առափանզայ (Ե, 1.9), նա, և ի դարսու քրիստոնէաթեան, երբ քաջն Մուշեղ Մամիկոնեան սպաննուեցա, « Ոչ հաւասարին » ընտանիք նորա մանուն նորա . կէօր յասներ՝ լոյ նմա ակն ունէին. մինչեւ զզուին ան » զէն ի կոնեցն կարեալ, կցեցին, և հաս » նին եղին ի տասնիսն աշշարակի միոյ. առ » սէին, զի վասն զի այր քաջ էր՝ Առէզը » իջանեն և յարուցանեն զնա »: Դար մի

զրէ Շամիրամայ չաստուածները (ոՒՔ), և սուռ գարանէ՝ Քրոնող, օսք զու տառ, և նոյն համարի ընդ Առէզը:

վերջը պարզամիտ ռամիկն Հայոց կու հառատար, թէ եղած ըլլան Ալլէզք, իրենց նախանեաց առուն, բայց անոնց հաւատոց հետ աներեւութացեր են թայց այս հայկական աւանդութիւնն պատուաւոր կերպով մի պահուած և պատուած է, քիչ մի այլափոխութեամբ, հին աշխարհի ամենէն խոհական և վայշէլազիր հեղինակի քով, Պղաստնի, ինչպէս պիտի տեսնեմք յետոյ: — Վահրամ վ.՝ իր Հարցմ. և պատասխանեաց մէջ՝ Հարու եւս կոչէ (եթէ սիստ չէ գրուած) անզոյ և միայն անուն են կ'ըսէ Յուշկապարիկն և ո Հարուն. թէ Կ » կենպանի մի, որ յար լեզուն զմեռեալն և » կենպանան, և կոչի Յարալէզ » :

Յիշենք հիմայ ուրիշ նշանաւոր հայկական հրէշ մ'այլ. Համբարու. որոյ կերպարանին անձանօթ է, այլ միշատակութենէն ի Ա. Գիրս կ'իմացուի որ անտապատ ամայի աեղեաց մէջ գտուող կամ կարծուած կենպանոյ մի նման էր. բայց աւելի երեւակայեալ քան բնական, և ոչ այլ ամենուն կարծեաց համեմատ. ինչպէս յայտնաւի Ա. Գրոց այլիւայլ թարգմանութեանց մէջ՝ այլեւալ նմանողութեամբք. մեր մեկնիչը (Մի. Գոշ, ի Մեկն. Երեմ.՝ Գէորգ Արեւացի ի Մեկն. Խայր, (ՓԳ, 24. 1.Դ, 13)). Անկիերանի հետք Համբարուց միայն անուն են, իրօք չկամ կ'ըսեն, կ'անցնին. հին մեկնիչն Յովլայց իսիրաքոս՝ լաս հայերէն թարգմանութեան կ'ըսէ. » ԶՀամբարու՝ այլք Յուշկապարիկ Թարգման ք նեցին. և համբաւ է վասն սորա՝ թէ ծով » վային կենդանի է, ի միջոյն ի վայր և ձակն, և ի վեր կնոջ կերպարան, և այնա՝ քան քաղցրաձայն՝ զի պակնուն լսողքն », և այլն. այս նկարագիրն Տիրեն ըսուած հրէշից յարմարի, բայց Յովլայց զինքն անոր եղայրոյ կոչած Համբարուն, Խայեայ յիշածն (ԼԴ, 13) ընդ՝ « Գավաննց անսպասի, Համերակութ և Դիտերը Զայլամանց », ցամարային և ոչ ծովային էակ ցուցընեն, միանգամայն և իգական սեփի և կերպարանաւ. վասն զի ինչպէս այս տեղ Խայր՝ Զայլամանց քասերը յիշէ, ուրիշ մարգարէք այլ (Միքրա, Ա. 18, Երեմ. Մ, 39) առաջինն՝ Վիշապն այլ Համբարեաց հետ մէկ տեղ յիշէ. « Արասցէ կոծ իրեւն զՎիշապաց, և սուկ իրեւ-

» զդասերաց Համբարեաց » . անսպատի մէջ ողբաձայն ճռաւցող թռչնոց և լալկան կանանց ձայնն միանգամայն խառնեն՝ այսպիսի բանք , որով և լալկաններու կերպարանըն : Եղին Սիրեննեւ Տերդին գրէ Հզամբարուս մեր . Լատին թարգմանութիւնն միշտ Թայլամն , Struthion , կ'զրէ Համբարուի տեղ . անվէ փոխուած նոր լեզուք՝ նոյնպէս , երբեմն այլ թու , կարապ , կամ առանց յատկութեան՝ նշանայն և դաժան թռչուն (Oiseaux Iugubres կամ sinistres) . Անզգիացի թարգմանք համբարին թէ երրայերէն Լիլիր և Փիպպող բառերն նշանակեն բռերու տեսակներ : Մեր՝ մարդարէից հնազոյն մեկնին Դաւիթ քանանայ (Ժ. Պարու) , համարի ըստ կարծեաց՝ ո Դեւս հերարոր , խոզանեալք և աշտանա ա կամազք . և թէ զազանք ինչ և թռչունք ո են յանապատի , սակաւոց տեսեալ և անան ծանօթ յոլովից » : Սա այլ այր զիւակերպ հրէշից խոկած և ցցուած մազերովն կանացի կերպարանք կ'ընծայէ : Իսկ մեր հնազոյն յիշող հեղինակն Եղնիկ , իրական կենդանի համարի , վասն զի կ'ըսէ . « Համբարուաց » ծնունդը գոն և մեռանին » : Ուրիշ անանուն զրող մի և հին բառպիրը՝ մողիսաձեւ կենանի ցուցընեն , ըսելով : « Համբարու՝ Քառ » բարոշն է . ի նմանէ ծնեալն՝ եթէ ի ցառ » մարի ծնանի՝ Քարթոշ կոչի , և եթէ ի » ջուրս ծնանի՝ Կոկորիլոս կոչի » : Յայտ է որ այս անճոռնի երկեկից կենդանին այլ մոզիաց ցեղէն է բառ բնաբանից . — (աղէկ զոյզ , կամ քոյր և եղայր , Թայլամունք և Տիտունք , կոկորիլոսք) . որոց տեղ մեր վե-

րոյիշեալ զրողն (Դաւիթ) տեղ մ'այլ կ'ըսէ լոկ , և Համբարուս և Դատերս վայրենեաց » : Ինչ որ ըլլան աստնք՝ մեր հին Հայոց ճանշած Համբարուն չեն յայտներ , զոր հարկ էր իր անունէն ստուգիլ , և զայս շեմք կըրնար . որովհեաւ հաւանական չէ համբար բառին ծագումն՝ ըստ հիմայ գործածուած իմաստին . զի հիներէն ոչ ոք յիշած է թէ Վիշապաքաղի պէս աս այլ համբարներ գոզնայ , կամ ընդ հակառակն՝ պահպանէ գհամբարու , ինչպէս կարծէ Ջրպետ , մանաւանդ ամայութեանց մէջ ապրելով և ոչ անոր պէս արտերու մէջ . ապա ուրիշ ծագումն ունի անունն կամ բառն , որոյ նշանական է և ոչ կակուզ վերջաւորութիւնն իրակերպ . և հողովումն եւս , որ փոխանակ Համբարուաց զրելու , համբարեաց զրոփ : — Ալորից համբարույի շշորդ մ'այլ կայ այդ անուան մէջ : — Տարբեր կերպով մ'այլ գրած է անծանօթ հեղինակ մի , որ բառական հին կարծուի , և հարցընէ . « Զի՞նչ են Համբարունկը և Յուշկապարիկը և Երուացուլք (և այլ եօթն այսպիսիք , զորս » կոչէ) « սոսկ անուանք » . և պատասխանէ , թէ բաց ի հրէշանակաց և ի մարդկանց՝ զրոծող արարած չկայ ; զատ « ի Դիւաց . « որը ապատամբեալ միշտ շարք են . և առ ո ի մոլորեցուցանել զմարզիկ , և անուամբ » կերպս ի կերպս լինելով , զի որոսացեն » զմեր ի կրուստ . և անիմաստք ի մարդ . » կանչ կարծեն՝ թէ են ինչ , այլ նոքա են » զեւք անմարմինք , ոչ ծննդեան ? ըստ ու բում կերպի երեւին և անուանեն զնոյն » :

( Շարայարելի )

